## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

16 հունվարի 2024 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Սերժիկ Մուրադովը, Անզոր Շաբոյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը**

**Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արթուր Գրիգորյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 16-ի N 1 հերթական նիստի օրակարգը.
1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին,
2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2024 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին,
3.Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարանի 2024 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին,
4.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2024թ. տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
5.Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին,
6.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեի տարեկան կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին
7.ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2024 թվականին սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով հանրային բաց քննարկումները՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Ալագյազ համայնքի 2024 թվականի բյուջեն՝ եկամտային 238 446 400 (երկու հարյուր երեսունութ միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, 88 320 967 (ութսունութ միլիոն երեք հարյուր քսան հազար ինը հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ 2023 թվականի տարեվերջյան մնացորդ և ծախսային 326 767 367 (երեք հարյուր քսանվեց միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2/

Լսեցին

***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2024 թվականի վարձատրությունը սահմանել 430000 (չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3/

Լսեցին

***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով և քննարկելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի 2024 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածները՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5/

Լսեցին

***ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2023 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6/

Լսեցին

***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՇՈՒԽԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2023 թվականի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7/

Լսեցին

***ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՊԱՊԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջով, ինչպես նաև քննարկելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի

ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Սահմանել Արագածոտն մարզի Ալագյազի համայնքի 2024 թվականին սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները հետևյալ սկզբունքով.

1.Միակողմանի ծնողազուրկ անապահով երեխաներին՝ 10.000–30.000 ՀՀ դրամ,
2.Դժբախտ պատահարներից մահացած անձանց ընտանիքներին՝ 50.000–80.000 ՀՀ դրամ,
3.Մահացած անձանց ընտանիքներին՝ 30.000-80.000 ՀՀ դրամ,
4.Զին. ծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցություն՝ 30.000–50.000 ՀՀ դրամ,
5.Զոհված զին. ծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցություն՝ 50.000–100.000 ՀՀ դրամ,
6.Սոցիալապես անապահով ընտանիքներին 10.000–30.000 ՀՀ դրամ,
7.Պատերազմի վետերաններին սոցիալական խնդիրների լուծման համար 10.000–20.000 ՀՀ դրամ,
8.1-ին կարգի հաշմանդամներին 20.000–30.000 ՀՀ դրամ,
9.Ուսումնական հաստատություններում գերազանց առաջադիմության համար լավագույն աշակերտին խրախուսման գումար 10.000–30.000 ՀՀ դրամ,
10.Ուսումնական հաստատություններում տարվա լավագույն ուսուցչի համար խրախուսման գումար 30.000–50.000 ՀՀ դրամ,
11.Բնական աղետներից տուժած անձանց դրամական օգնություն՝ կախված հասցված վնասի չափից՝ 30.000-80.000 ՀՀ դրամ,

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8/

Ավագանու անդամներ

ՖԱՅԶՈ ԱԼԻՅԱՆ
ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ
ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ
ԱԼԻԽԱՆ ՀԱՄԵՅԱՆ
ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ
ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ________________

*Նիստն արձանագրեց՝* Արթուր Գրիգորյանը ________________